



## Սիրելի հայրենակիցներ,

Այս տարին Կիպրոսի համար եղաւ վերադասաւորման եւ վերարժեւորման հանգրուան մը, որու ընթացքին անցեալ տարուան տնտեսական ու դրամատրոնային համակարգի աննախընթաց ցնցումները կասեցւեցան, շնորհիւ կառավարութեան առած լուրջ եւ միեւնոյն ժամանակ ցաւալի որոշումներուն:



Պետութեան պարտքը հակակշռուեցաւ, հիմնական չորս դրամատուները յաջողութեամբ բոլորեցին Եւրոպական Միութեան կողմէ սահմանուած քննութիւնը, իսկ տրնտեսութեան բարելաւման համար զանազան երկիրներու հետ պետական մակարդակի այցելութիւններն ու այդ առթիւ կնքուած համաձայնութիւնները կը սպասուին որ յանգին շօշափելի արդիւնքներու: Նշենք, թէ Կիպրոս արդէն իսկ մուտք գործած է միջազգային շուկաներ եւ յաջորդ տարի կ'ակնկալուի շատ փոքր տնտեսական աճ: Սակայն, այս չի նշանակեր, թէ ժողովուրդը շուտով պիտի վերագտնէ իր անցեալի բարօրութիւնը: Տակաւին ճանապարհը երկար է եւ պիտի գործադրուին ապապետականացման (Privatization) ծրագիրներ, որոնց շուրջ սկզբնական հա-

մաձայնութիւն գոյացած է եւ նոր օրէնքներ պիտի ներմուծուին, որոնք պիտի նպաստեն մրցունակ տնտեսութեան մը ստեղծման եւ Եւրոպական բարձր չափանիշներով Կիպրոսի մը ձեւաւորման:

Գալով Կիպրահայ Գաղութի տարբեր կառոյցներու, կազմակերպութիւններու եւ մեր Գրասենեակի գործունէութեան, ինչպէս նախորդ խմբագրականիս մէջ յիշած էի, մինչեւ տարեվերջ իրականանալիք ձեռնարկներու շարքը բաւական ճոխ ու հարուստ պիտի ըլլար նորութիւններով:

Վերջին երեք ամիսներուն ընթացքին, գաղութը բացումը կատարեց նոր մարգագաշտի մը՝ Զ.Մ.Ը.Ս.-Յ.Ե.Ս. ակումբի կառոյցի կողքին եւ սկաուտական շարժումը վերաշխուժացաւ երկար տարիներու բացակայութենէ ետք: Պաշտօնական բացումը կատարուեցաւ «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնին եւ մեծ յաջողութեամբ իրականացաւ Ինգա եւ Անուշ Արշակեան քոյրերուն անգլագական համերգը: Տեղի ունեցաւ Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյ գոյգ երգչախումբերուն ելոյթը եւ Նիկոսիոյ Վիքթորիա փողոցին վրայ գտնուող Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, երկրորդ անգամ ըլլալով, Ս. պատարագ մատուցուեցաւ: Իսկ վերջերս, Կիպրոս-Հայաստան փոխյարաբերութիւնները անգամ մը եւս ամուր հիմերու վրայ դրուեցան՝ յանձինս Խորհրդարանի Նախագահ Եաննակիս Օմիրուի այցելութեամբ եւ քանի մը օրեր առաջ, հապճեպ դասաւորումով Կիպրոս այցելած Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարար Տիկին Հրանուշ Յակոբեանի, որոնց մասին անդրադարձած ենք յաջորդող էջերով: Այս բոլորին կողքին, գաղութէն ներս տեղի ունեցան մշակութային, ընկերային ու բարեսիրական բնոյթ կրող զանազան ձեռնարկներ ու հաւաքներ:

Վերջապէս, վերոնշեալ եղելութիւնները ի մտի ունենալով, կրնամ հաստատել, թէ Կիպրահայութիւնը կ'ապրի

զարթօնք մը, իր բոլոր երեսներով եւ յոյսով եմ, որ աշխատանքները նոյն թափով պիտի շարունակուին տարբեր ուղորտներէ ներս, ապահովելով Կիպրահայութեան վերելքն ու բարգաւաճումը:

Սիրելիներ,

Շնորհաւորելով ձեր բոլորին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթանքս է, որ 2015-ը ըլլայ անկիւնադարձային տարի մը թէ՛ մեր Սուրբ Դատին արդար հատուցման առնչութեամբ եւ թէ՛ մեր Հայրենիքի ու Արցախի հիմնախնդիրներու բարուք լուծման իմաստով:

**Վարդգէս Մահտեսեան**

**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### Հպատակութիւն

Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսներու ընթացքին, երեք անհատներ, որոնք Կիպրոսի մէջ երկար տարիներ օրինաւոր բնակութիւն հաստատած էին, ստացան Կիպրական հպատակութիւն:

### Կիպրահայ գաղութի կեանքէն

Չորեքշաբթի, 1 Յոկտեմբեր 2014-ին, Պետական ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Համազգայինի «Օշական» մասնաճիւղի կազմակերպած գրական երեկոյին, նուիրուած Սմբատ Տէրունեանի (Տէվլեթեան) գրական վաստակին, որ տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ի ակումբին մէջ:

Ուրբաթ, 3 Յոկտեմբեր 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Մարոնիթ Համայնքի, Եւրոպական Խորհրդարանական Կիպրոսի Գրասենեակի եւ Եւրոպական Յանձնաժողովի Կիպրոսի Ներկայացուցչութեան կազմակերպած «Cypriot Maronite Arabic» միացեալ միջոցառումին, որ տեղի ունեցաւ Եւրոպական Միութեան Տան մէջ, համագործակցութեամբ Կիպրոսի Կրթութեան եւ Մշակոյթի Նախարարութեան:

Կիրակի, 5 Յոկտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին եւ Արցախի Առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեանի քարոզին, որմէ ետք Սրբազան Հայրը հիւրասիրուեցաւ Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու բնակարանին մէջ: Իսկ Երկուշաբթի, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, Լիմասոլի «Ամաթուս» պանդոկին մէջ, ներկայ



գտնուեցան Սրբազան Զոր գիրքի շնորհահանդեսին, որ ի պատիւ Արցախի Առաջնորդին կազմակերպած էր Տիար Արսէն Աղաճանեան:

Շաբաթ, 11 Հոկտեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Լիւսի Յովհաննէսեանի մասնակցութեամբ «Կաստէլիոտիսսա» սրահին մէջ տեղի ունեցած բարեսիրական համերգին:

Նոյն օրուայ գիշերը, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Վահէ Պէրպէրեանի երգիծական ներկայացումին, կազմակերպութեամբ Զ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ.-ի վարչութեան, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահին մէջ:

Շաբաթ, 25 Հոկտեմբեր 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցաւ Նիկոսիոյ Հայկական Բարեգործական Ընդհանուր Սիութեան գործունէութեան հարիւրամեայ յորելենական հանդիսութեան, որ տեղի ունեցաւ Զ.Բ.Ը.Մ.-ի «Գըրպըլըքեան» սրահին մէջ:

Կիրակի, 26 Հոկտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Հ.Օ.Մ.-ի «Սօւե» մասնաճիւղի կազմակերպած Աշնանային ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ի ակումբին մէջ:

Շաբաթ, 1 Նոյեմբեր 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան մասնաւոր հրաւերով, ներկայ գտնուեցաւ սփրանօ Ջարա Բարխուդարեանի մենահամերգին, որ տեղի ունեցաւ «Կաստէլիոտիսսա» սրահին մէջ:

Շաբաթ, 8 Նոյեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատուկ հրաւեր ստանալով, ներկայ գրտնուեցան Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կիպրոսի Կոմիտէին կազմակերպած ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ի ակումբին մէջ:

Ուրբաթ, 21 Նոյեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Սկաուտական խոստումի արարողութեան, որ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ի ակումբի նոր մարզադաշտին մէջ:

Կիրակի, 23 Նոյեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Անուանակոչութեան տօնին առիթով մատուցուած Ս. Պատարագին եւ մատաղօրհնութեան արարողութեան, որու ընթացքին կարդացուցեաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին սրբատառ կոնդակը, որով Նիկոսիոյ Հովիւ Տէր Մոմիկ Քիյն. Հապէշեանին արտօնութիւն կը տրուէր լամջախաչ կրելու: Այս ուրախ առիթով, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորական գիր մը յղեց Տէր Մոմիկին, յայտնելով անոր, թէ արժանի էր այս շնորհումին իր երկար տարիներու ծառայութեան համար:

Ուրբաթ, 28 Նոյեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գրտնուեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ի նոր մարզադաշտի բացման պաշտօնական արարողութեան, որ կը վայելէր Հանրապե-

տուքեան Նախագահ Ն. Վ. Նիկոս Անաստասիատիսի հովանաւորութիւնը: Առողջական պատճառներով բացակայելուն համար, զայն ներկայացուց Կրօնական Փոքրամասնութիւններու Նախագահական Յանձնակատար Պրն. Ֆոտիս Ֆոտիուն: Յիշենք, թէ Պետական Ներկայացուցիչը խօսք առնելով շնորհաւորեց այս առաքելութեան նախաձեռնողները եւ իր երախտագիտութիւնը յայտնեց, գաղութի նախկին սերունդին աշխատանքը շարունակելու՝ նոր սերունդին պատրաստակամութիւնը:

Կիրակի, 30 Նոյեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Վիքթորիա փողոցին վրայ գտնուող Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագի արարողութեան, որու պատարագիչն էր Արժանաշնորհ Տէր Սոմիկ Քինյ. Հապէշեան, իսկ քարոզիչը՝ Գերշ. Տէր Նարեկ Արքեպիսկոպոս:

Շաբաթ, 6 Դեկտեմբեր 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Չարլզ Տիքընզի «Օլիվըր Թուիսթ» թատերական ներկայացումին, որ տեղի ունեցաւ Ֆանէրօմէնի Վարժարանի սրահէն ներս, համագործակցութեամբ Նարեկ եւ Ֆանէրօմէնի երկրորդական վարժարաններու աշակերտներուն, պաշտօնութեան եւ տնօրէններուն:

Կիրակի, 7 Դեկտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Հ.Օ.Մ.-ի «Սօսէ» մասնաճիւղի կազմակերպած ճաշատեսակներու տօնավաճառին, որ տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Մ.-ՀԵՄ.-ի ակումբին մէջ:

Շաբաթ, 13 Դեկտեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Համազգայինի «Օշական» մասնաճիւղի «Դիմակ» թատերախումբի ներկայացուցած՝ Յարութ Թահմազեանի «Սխալ Ուղղութեամբ» զաւեշտին (2րդ մաս), որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահին մէջ:

Հինգշաբթի, 18 Դեկտեմբեր 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Ամաթէոր Մարզիկներու Միութեան տարեկան պարգևատրումի միջոցառումին, որ տեղի ունեցաւ Օլիմպիաքօ Մեղարոյի մէջ, որու ընթացքին, ձեռամբ Պետական Ներկայացուցիչին, պարգևատրուեցաւ Լեւոն Սարեան: Պրն. Մահտեսեան շնորհաւորական գիր մը յղելով Պրն. Սարեանին, անոր մաղթեց արելատուութիւն:



Կիրակի, 21 Դեկտեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Երգչախումբերու Ամանորեայ եւ Ս. Ծննդեան համերգին, որ տեղի ունեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ:

Երկուշաբթի, 22 Դեկտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի Նախակրթարանի եւ Միջնակարգի Կաղանդի հանդեսին, որ տեղի ունեցաւ դպրոցի սրահին մէջ:

Երեքշաբթի, 25 Դեկտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Լառնաքայի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ Անուանակոչութեան արարողութեան եւ մատաղի օրհնութեան, որու ընթացքին ընթերցեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին սրբատառ կոմիդիան, որով Լառնաքայի եւ Լիմասոլի Հովիւ Տէր Մաշտոց Քիյն. Ազգարեանին արտօնութիւն կը տրուէր ծաղկեայ փի-



լոն կրելու: Այս ուրախ առիթով, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորական գիր մը յղեց Տէր Մաշտոցին նշելով, թէ ան արժանի էր այս շնորհումին, զոյգ քաղաքներուն մէջ իր երկար տարիներու ծառայութեան համար:

Նոյն օրը երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ի կազմակերպած տարեկան պարահանդէսին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Lemon Park» սրահին մէջ:

### **Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ձեռնարկներ**

Երկուշաբթի, 6 Հոկտեմբեր 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան, ընկերակցելով Տէր Նարեկ Արքեպիսկոպոսին, ծանօթացման հանդիպում մը ունեցան ԷՏԷՔ կուսակցութեան նախկին կուսակցապետ Տոքթ. Վաստս Լիսարիտիսին հետ:

Նոյն օրը, Պետական Ներկայացուցիչը եւ Կաթողիկոսական Փոխանորդը, ծանօթացման հանդիպում մը ունեցան նաեւ Ստրովոլոսի Քաղաքապետ Դոկտ. Լազարոս Սավիտիսին հետ:



Երեքշաբթի, 7 Յոկտեմբեր 2014-ին, Պրն. Վարդգես Մահտեսեանն ու Տէր Նարեկ Արքեպիսկոպոսը, քաղաքավարական այցելութիւն մը տուին Հանրապետութեան Նախագահ Նիկոս Անաստասիատիսին:



Հինգշաբթի, 23 Յոկտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ նորանշանակ Կրօնական Փոքրամասնութիւններու Հարցերով Նախագահական Յանձնակատար Պրն. Ֆոտիս Ֆոտիուի հետ:

Երկուշաբթի, 10 Նոյեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգես Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Կիպրոսի Պետական Համալսարանի կազմակերպած՝ Հրանդ Տինքի յիշատակին նուիրուած դասախօսութիւն-գրոյցին, որ տեղի ունեցաւ Համալսարանի սրահին մէջ:

Երկուշաբթի, 17 Նոյեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ Կիպրոսի Պետական Համալսարանի, Կրթական Նախարարութեան եւ Եւրոպական Յանձնաժողովի Թարգմանութեան Բաժանմունքի միաց-

եալ կազմակերպութեամբ՝ Լեզուագիտութեան ասպարեզին ապագան եւ հեռանկարները միւրով միջոցառումին, որու ընթացքին ելոյթ ունեցաւ Կիպրոսի Պետական Համալսարանի Հայերէն լեզուի դասընթացքներու ուսուցչուհի Տիկին Վիոլէթա Նալչաճեան-Թաշճեան:

Երկուշաբթի, 24 Նոյեմբեր 2014-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան եւ Տէր Նարեկ Արքեպիսկոպոս պաշտօնական հանդիպում մը տուին Արտաքին Գործոց Նախարար Պրն. Եաննակիս Կասուլիտիսին:



Երկուշաբթի, 15 Ղեկտեմբեր 2014-ին, Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանն ու Կիպրահայ գաղութի պատկան մարմիններու ներկայացուցիչները, Խորհրդարանին մէջ տեսակցութիւն մը ունեցան Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի Ազգային Փոքրամասնութիւններու Պահպանութեան Հարցերով (Council of Europe Framework Convention for the Protection of National Minorities) ներկայացուցիչներուն հետ, որու ընթացքին քննուեցան Կիպրահայ գաղութը յուզող հարցեր:

### «Մնալ կամ լքել. Սուրիահայուֆինը երկրնտրանքի դիմաց»

Հինգշաբթի, 23 Հոկտեմբեր 2014-ին, Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակը, Համագործակցութեամբ Կիպրոսի Պետական Համալսարանին, կազմակերպեց դասախօսութիւն մը «Մնալ կամ լքել. Սուրիահայուֆինը երկրնտրանքի դիմաց» նիւթով, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Իֆիւճեան» սրահին մէջ:

Օրուան բանախօսն էր հետազօտող, Դոկտորականի թեկնածու, Tampere Խաղաղութիւն Ուսումնասիրութեան Հիմնարկի գիտաշխատող Արմենակ Թոքմաճեանը, որ մանրամասնօրէն ներկայացուց ներկայիս տիրող քաղաքական ու ընկերային իրավիճակը Սուրիոյ մէջ եւ երիտասարդութեան դիմագրաւած դժուարութիւնները:

### Ինգա եւ Անուշ Արշակեաններու բացառիկ ելոյթը

Շաբաթ, 15 Նոյեմբեր 2014-ին, Ստրովոլոսի Քաղաքապետարանի հանդիսասրահին մէջ, մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ Ինգա եւ Անուշ Արշակեան քոյրերու աննախընթաց համերգային երեկոն, ծայրէ ծայր լեցնելով սրահը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, որ նշեց, թէ այս ելոյթը



տեղի կ'ունենայ Կիպրոսի տնտեսական ամենադժուար պայմաններուն տակ, որուն իրականացումը մեզմէ պահանջեց յանդուգն քայլեր առնել, կառչած մնալով մեր առաքելութեան եւ սկզբունքներուն՝ իրականացնելով Կիպրահայութեան մեծամասնութեան փափաքը:

Հայրենիքէն ժամանած արուեստագէտ քյորերը, հայաքոյր շունչով մեկնաբանեցին ժողովրդական ու արդի երգեր, յուզմունք եւ միեւնոյն ժամանակ խանդավառութիւն պարզելելով ներկաներուն: Երկու ժամ տեւողութեամբ յայտագիրի ընթացքին, Կիպրահայութիւնը իսկապէս առիթը ունեցաւ վայելելու համբաւաւոր երգչուհիները, որոնք հայկական ժողովրդական երաժշտութիւնը մատուցեցին իւրայատուկ եւ ինքնատիպ ոճով:

Համազգայինի «Սիփան» պարախումբի աղջիկներն ու տղաքը, պարուսոյց Պետրոս Ղարիպեանի գլխաւորութեամբ, հրաշք գործեցին բեմին վրայ, մերթ ընդ մերթ ընկերակցելով Արշակեան քյորերուն ու նաեւ ելոյթ ունեցան առանձնաբար:

Համերգի աւարտին, հանդիսատեսները գոհունակութեամբ դուրս եկան սրահէն, շնորհաւորելով Պետական Ներկայացուցիչը հայ մշակոյթի տարածման ու ծանօթացման գծով իր ջանքերուն համար: Առաջին անգամ ըլլալով, ելոյթէն ետք եւ սրահի մուտքին, ժողովուրդը առիթը ունե-





ցաւ ձայնասկաւառակները մակագրելու եւ նկարահանուելու երգչուհիներուն հետ:

Յաջորդ օրը, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու ընկերակցութեամբ, անոնք վայելեցին Այլա Նաբայի ծովեզերեայ միօրեայ պտոյտը: Իսկ Երկուշաբթի, նախքան Հայաստան վերադառնալը, այցելեցին Նիկոսիոյ Նարեկ Վարժարան, անմոռանալի յուշեր ձգելով աշակերտութեան մօտ: Յետմիջօրէին, անոնք Հայաստան վերադարձան Կիպրոսի ու Կիպրահայութեան մասին յիշարժան տպաւորութիւններով:

### **Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Եաննակիս**


### **Օմիրուի Երկօրեայ այցելութիւնը Հայաստան**

Երեքշաբթի, 18 Նոյեմբեր 2014-ին, Կիպրոսի Խորհրդարանի Նախագահ Եաննակիս Օմիրու երկօրեայ պաշտօ-



նական այցելութեամբ մեկնեցաւ Հայաստան, ՀՀ Ազգային ժողովի Նախագահ Գալուստ Սահակեանի հրաւերով: Օմիրուի կ'ընկերակցէր Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան:

Յաջորդ օրը, Եաննակիս Օմիրու հանդիպում ունեցաւ Գալուստ Սահակեանի հետ, որմէ ետք ան մասնակցեցաւ Ազգային ժողովի արտակարգ նիստին, ուր ելոյթ ունենալով Կիպրոսի Կառավարութեան աջակցութիւնը յայտնեց Հայաստանի Կառավարութեան, շեշտելով, թէ երկու երկիրները պէտք է զարգացնեն երկկողմ յարաբերութիւնները ընդդէմ թուրքիոյ վարած քաղաքականութեան: Ապա ան շարունակելով իր հանդիպումները, տեսակցեցաւ Արտաքին Գործոց Նախարար Էդուարդ Նալպանտեանի, Վարչապետ Յովիկ Աբրահամեանի եւ Նախագահ Սերժ Սարգսեանի հետ:





Քինգզաբթի, 20 Նոյեմբերին, Եաննակիս Օմիրու եւ իր պատուիրակութիւնը, այցելութիւն մը տուին Ծիծեռնակաբերդ, իրենց տուրքը մատուցելու եւ յարգելու Ցեղասպանութեան զոհերու յիշատակը, ապա մեկնեցան Ս. Էջմիածին հանդիպելու Գարեգին Բ. Կաթողիկոսին հետ:

Յայաստանէն վերադարձին, Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան, Կիպրոսի Խորհրդարանի Նախագահին այս այցելութիւնը գնահատեց որպէս Յայաստանի ու Կիպրոսի Կառավարութիւններուն միջեւ ցարդ իրականացած ամենարդիւնաւէտ համագործակցութիւնը:

**«ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնի Պաշտօնական Բացում**



Շաբաթ, 22 Նոյեմբեր 2014-ին, Կաթողիկոսական Փոխանորդ Տեր Նարեկ Արքեպիսկոպոսի օրհնութեամբ եւ Յոգեւոր Հայրերուն մասնակցութեամբ, ինչպէս նաեւ Ստրովոլոսի Քաղաքապետ Դոկտ. Լազարոս Սավիտիսի, գաղութի պատկան մարմիններու ներկայացուցիչներուն եւ անդամներուն ներկայութեան, պաշտօնական բացումը կատարուեցաւ «ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնին, ձեռամբ Կրթութեան եւ Մշակոյթի Նախարար Պրն. Կոստաս Կատիսի, որ մեծ ուրախութեամբ հատեց Կեդրոնի մուտքին գետեղուած ճերմակ ժապաւէնը, իր կողքին ունենալով Տիկին Մակի Մահտեսեանը:

«ՆԱՆՕՐ» Հայկական Մանկական Կեդրոնի Վարչական Խորհուրդի ատենապետուհի Տիկին Մակի Մահտեսեան խօսք առնելով յայտնեց, թէ այս Կեդրոնին իրագործումը իր անուսնոյն՝ Պետական Ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանի երկար տարիներու երազն էր որ իրականացաւ: Շարունակելով, ան իր անկեղծ շնորհակալութիւնները



յայտնեց նախ Կիպրոսի Կրթութեան եւ Մշակոյթի Նախարարութեան անյապաղ օժանդակութեան համար, ապա Վարչական Խորհուրդի անդամներուն եւ ծնողներուն:

Կրթութեան եւ Մշակոյթի Նախարար Պրն. Կոստաս Կատիս խօսք առնելով, փոխանցեց իր ու Կրթական Նախարարութեան մշտական օժանդակութիւնը՝ հոգալու Կիպրահայ գաղութի կարիքները:

Տեղի ունեցաւ պատշաճ գեղարուեստական յայտագիր «ՆԱՆՕՐ» Մանկական Կեդրոնի փոքրիկներուն մասնակցութեամբ, որ մեծ խանդավառութիւն ստեղծեց ներկաներուն մօտ, ապա յաջորդեցին «ՆԱՐԵԿ» Հայկական Վարժարանի երգչախումբի եւ «ՆԱՆՕՐ» Մանկապատանեկան պարախումբի ելոյթները:

Վերջաւորութեան, Նախարար Կատիս բացումը կատարեց յուշաքարին՝ շրջապատուած Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններու, Սրբազան Հօր եւ Վարչական Խորհուրդի անդամներուն, որմէ ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն Նարեկ Վարժարանի շրջափակին մէջ:

Բացման արարողութեան գաղութի անդամներուն հոծ ներկայութիւնն ու երախտագիտական արտայայտութիւնները վկան հանդիսացան այս Կեդրոնին ընծեռած բարիքներուն ու կարեւորութեան:

### **Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարար Տիկին Հրանուշ Յակոբեանի պաշտօնական այց**

Շաբաթ, 20 Դեկտեմբեր 2014-ին, երկօրեայ այցելութեամբ Կիպրոս ժամանեց Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարար Տիկին Հրանուշ Յակոբեան, ընկերակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան Յունաստանի եւ Կիպրոսի Արտակարգ եւ Լիազօր դեսպան Գագիկ Ղալաչեանի:

Կիրակի, 21 Դեկտեմբեր 2014-ի առաւօտեան, Սփիւռքի Նախարարը ներկայ գտնուեցաւ Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ մատուցուած Ս. Պատարագին, որմէ ետք ան տեսակցութիւն ունեցաւ Երեսփոխանական ժողովի եւ Ազգային Վարչութեան անդամներուն հետ, Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ:

Ապա, Տիկին Յակոբեան Աւագ Արիապետ Յարութիւն Անմահունին պարգեւատրեց ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան շքանշանով, իսկ Տիկին Վերա Թահմագեանին յանձնեց «Մովսէս Խորենացի» շքանշանը, որուն արժանացած էր ան 2013-ին:

Նոյն օրը կէսօրէ ետք, Հրանուշ Յակոբեան միացեալ հարցազրոյց մը ունեցաւ Կիպրոսի Ռատիօկայանի Հայկական ժամին եւ «Արծազանգ» թերթին հետ, որմէ ետք այն այցելեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ե.Մ.-ի ակումբները, հանդիպելով վարչական անդամներուն հետ:

Երեկոյեան, Սփիւռքի Նախարարը ներկայ գտնուեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ երգչախումբերու համերգին եւ ժողովրդային հիւրասիրութեան, այնուհետեւ Կիպրահայ պատկան մարմիններու ներկայացուցիչներուն ներկայութեամբ, հիւրասիրուեցաւ Պետական Ներկայացուցիչին բնակարանին մէջ:

Երկուշաբթի, 22 Դեկտեմբեր 2014-ի առաւօտեան, Կիպրոսի Խորհրդարանին մէջ, Տիկին Հրանուշ Յակոբեան Հայաստանի Հանրապետութեան «Մխիթար Գոշ» շքանշանով պարգեւատրեց ԷՏԷՔ կուսակցութեան նախկին կուսակցապետ Տոքթ. Վաստս Լիսարիտիսը, անոր ունեցած պետական, հասարակական-քաղաքական գործունէութեան եւ մասնաւորաբար Խորհրդարանի Նախագահութեան շրջանին՝ Հայաստանի ու Հայութեան ունեցած անսակարկ աջակցութեան համար:



Նոյն օրը, Սփիւռքի Նախարարը այցելեց երեք քաղաքներու մէջ գործող ՆԱՐԵԿ Հայկական Վարժարաններն ու եկեղեցիները, ամբողջացնելով իր այցելութեան ծրագիրը եւ երեկոյեան վերադարձաւ Հայաստան:

### **Շնորհաւորագիր**

Երկուշաբթի, 13 Հոկտեմբեր 2014 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը իր ու Կիպրահայութեան անունով սրտանց շնորհաւորեց Եւրոներեսսիոյի Տոքթ. Էլէնի Թէոխարուսը, Հայաստանի Ազգային Ժողովի «Պատուոյ Մետալ»ով պարգեւատրուելուն ուրախ առիթով եւ Հայ Ժողովուրդին հանդէպ իր ցուցաբերած յարատեւ աջակցութեան համար:

Երկուշաբթի, 17 Նոյեմբեր 2014-ին, Պրն. Վարդգէս Մատենեան շնորհաւորական գիր մը յղեց Փրակա, Չեխիոյ Հանրապետութեան մէջ մնայուն բնակութիւն հաստատած՝

Կիպրահայ երաժիշտ Հայկ Սրկ. Իփիւճեանին, Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի Նախարարութեան կողմէ «Կոմիտաս» շքանշանով պարգեւատրուելուն ուրախ առիթով, յայտնելով իր հպարտութիւնը, որ ան իր ասպարէզին զուգահեռ հայ երաժշտութիւնը կը տարածէ աշխարհի տարբեր երկիրներուն մէջ:

### «ՆԱՆՕՐ» Մանկապատանեկան Պարախումբ



Շաբաթ, 20 Դեկտեմբեր 2014-ին, Նարեկ Վարժարանի սրահէն ներս տեղի ունեցաւ աւանդական դարձած «Նանօր» մանկապատանեկան պարախումբի Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի առիթով կազմակերպուած հաւաքոյթը: Փոքրիկները հաճելի պահեր անցուցին ներկայութեամբ Պետական Ներկայացուցիչին ու ծնողներուն: Պրն. Մահտեսեան խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեց երեխանե-

րուն, անոնց հետեւողական մասնակցութեան համար: Շարունակելով իր խօսքը, Պետական Ներկայացուցիչը իր շնորհակալութիւնը յայտնեց նաեւ վաստակաւոր պարուսոյց Պրն. Պետրոս Ղարիպեանին, անոր ցուցաբերած համբերութեան ու զոհողութեան համար: Ապա, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ կաղանդչէքի բաշխում, որմէ ետք պարախումբի անդամները զոհունակութեամբ մեկնեցան սրահէն:

### Այցելութիւն «Գալայճեան» Հանգստեան Տուն



Չորեքշաբթի, 24 Դեկտեմբեր 2014-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ընկերակցութեամբ Կաթողիկոսական Փոխանորդ Տէր Նարեկ Արքեպիսկոպոսի, այցելեցին «Գալայճեան» Հանգստեան Տուն եւ Ամանորեայ ու Ս. Ծննդեան լաւագոյն մաղթանքներով եւ անհատական նուէրներով պատուեցին տարեց հայրերն ու մայրերը:

## Վարդգես եւ Մակի Մահտեսեաններ

Կը շնորհաւորեն համայն հայուքիւնը  
Ամանորի եւ Ս. Ծննդեան  
գոյգ տօներուն առիթով՝  
մաղթելով Կիպրոսին ու Հայաստանին  
հիմնախնդիրներու բարւոք լուծում  
եւ փայլուն ապագայ

### ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

#### Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
Հեռախօս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42  
Ել. Հասցէ office@armenianmp.com  
Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

#### Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
Հեռախօս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42  
Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy